

**Հարց** Որո՞նք են բաժանորդի և մատակարարի պարտականությունները գազասպառման համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների դեպքում:

**Պատասխան** Գազասպառման համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների դեպքում մարդկանց կյանքին, առողջությանը կամ շրջակա միջավայրին վտանգ սպառնացող իրավիճակներում բաժանորդը պարտավոր է անմիջապես ընդհատել գազի սպառումը և այդ մասին անհապաղ տեղեկացնել մատակարարին: Մատակարարը պարտավոր է ահազանգն ստանալուց հետո, հնարավոր կարճ ժամկետում դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը: Մատակարարը վերսկսում է գազամատակարարումը վերոհիշյալ վտանգը վերացնելուց հետո՝ նախապես փոխհամաձայնեցված օրը և ժամին՝ հայտն ստանալուց հետո 36 ժամվա ընթացքում: Բնակչի կամ բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպության գազասպառման համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների դեպքում, գազամատակարարման դադարեցումից հետո, մատակարարը պետք է միջոցներ ձեռնարկի գազասպառման համակարգի վերականգնման համար՝ համաձայն սպասարկման համաձայնագրի: